Արձանագրության 7
Քաղցրավենիքի փաթեթների ձեռքբերման ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/11 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

15.10.2019թ.
Ժամը՝ 10:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Բաղդիշյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Տեր-Թորոսյան /գնահատող/
Ռ. Աբրահամյան /բացող/, Ա. Բալբաբյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան
Բացակայում էր՝ Ա. Փլավչյան /գնահատող/

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության և մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի մասին

(Ա. Բաղդիշյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություն:

1.2 «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային կայքի միջոցով հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել է գնման առարկայի իր կողմից առաջարկված տեխնիկական բնութագիրը, որը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է հրավերով սահմանված բնութագրին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

2. ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/11 ծածկագրով գնման ընթացակարգի 1,3,9 չափաբաժինների մասով ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Բաղդիշյան)

2.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետով ընդունած որոշումը՝ ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/11 ծածկագրով ընթացակարգի 1,3,9 չափաբաժինների մասով ընտրված մասնակից հայտարարել «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ին և վերջինիս ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

2.2 Հաշվի առնելով, որ ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով անգործություն ժամկետ չի կիրառվել՝ գնահատող հանձնաժողովը որոշեց՝ հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը /3-րդ չափաբաժնի մասով/ և սահմանել անգործության ժամկետ տասն օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

3. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Բաղդիշյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 10:20-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ..... Ա. Բաղդիշյան

Անդամներ՝ ..... Ռ. Աբրահամյան

..... Ա. Տեր-Թորոսյան

..... Ա. Բալբաբյան

Քարտուղար՝ ..... Ա. Համբարձումյան